391

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐ

ՆԻԿՈԼԱՅ II-Ի ՈՒՆԿՆԴՐՈՒԹԻՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԱՏԹԷՈՍ II-Ի՝Ն ՄԱՅԻՍԻ 29-Ի՝Ն.

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Պետերհոֆեան Մեծ Պալատում տեղի ունեցաւ Էջմիածնի պատրիարք և Ամենայն Հայոց Կաթուղիկոս Մատթէոս Իզմիրլեանի ընդունելութիւնը։

Երբ Նորին Վեհափառութիւնը եկաւ իր շքախմբով, առաջնորդուելով երկու առաջնթաց սպասաւորներով, երկու հոֆփուրիէրներով և կամէրֆուրիէրով, նաև իր շաթիրներով և երկու վարդապետներով, որոնք տանում էին հայրապետական նշանները, Նորին Սրբութիւնը պալատի դահլիճներից անցնելով Պատկերների դահլիճի միջով առաջնորդուեց հդէպի Զինական Հիւրասենեակը։

Ցերեկուայ ժամը 2 և 30 րոպէին աւագ արարողապետ կոմս Գենդրիկովը առաջնորդեց Նորին Վեհափառութեանը թարգման պրոֆէսսոր Մարրի ուղեկցութեամբ ընդունարանը, ուր դտնվում էր Կայսրը։ ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ բարեհաճեց դիմել Կաթուղիկոսին հետեւեալ խօսքերով.

Ուրախ եմ որ Ձերդ Վեհափառութեանը տեսնում եմ Ռուսաց պետութեան սահմանները ոտք դնելուց անմիջապէս յետոյ նախ քան Ձեր նոր պարտականութիւնները ստանձնելը։

Իմ նախնիքների օրինակով լցուած անփոփոխ բարեացակամութեամբ դէպի հայ ազգութեան պատկանող Իմ հպատակները, ինչպէս և դէպի Ձեր հովութեան յանձնուած Հայաւանդական եկեղեցին, Ես չեմ կասկածում որ Դուք Ձեր ապագայ գործունէութեան ժամանակ ամէն ջանք գործ կը դնէք՝ ամրապնդելու Ձեր հօտի անդամների մէջ քրիստոնէական հաւատի իսկական ոգին։

Ընդ ամին Այս հաւատացած եմ որ Դուք, իբրև Ձեր նոր հայրենիքի հաւատարիմ զաւակ, որ Ձեզ ընդունում է սրտաբաց, կը դրդէք Ձեր հօտին դէպի խաղաղ առաքինի կեանք և օրինական իշխանութիւններին ի հնազանդութիւն։

Իմ հոգածութիւններից մէկն է տեսնել դատիարակուող մատաղ սերունդը Քրիստոսի եկեղեցու հետ կապուած և Այս ձեզանից սպասում եմ որ առանձին ուշադրութիւն կդարձնէք, որ Ձեր խնամքին յանձնուած եկեղեցական-կրթական հաստատութիւնները օրէնքով ցոյց տուած սահմաններում կանոնաւորուեն, որպէս զի նրանց մէջ կրթութիւն ստացողները դեպի ընդհանուր հայրենիքը՝ Ռուսաստանը՝ տածած սիրոյ և անձանուիրութեան ոգով դաստիարակուեն։

Թող Իմ վստահութիւնը զօրավիգ լինի Ձեզ որ արտայայտուեց Ձեզ ծանր և պատասխանատու պաշտօնում—Էջմիածնի Պատրիարք և Մեծայն Հայոց Կաթողիկոս հաստատելու մէջ։

Ունկնդրութիւնը վերջանալուց յետոյ, աւագ-արարողապետ կոմս Դէնդրիկովը Էջմիածնի Պատրիարքին յանձնեց Կայսերական հրովարտակը և ադամանդակուռ խաչը վեղարի համար։

Այնուհետև Կաթողիկոսը և միւս հայ հոգևորականները Սպիտակ ընդունարանում հիւրասիրվեցին թէյով։

«Պ. Հ. Դ.»

Էջմիածին. Կաթուղիկոսի Տեղապահ Գէորգ Արքեպիս-
կոպոսին.

Երեկ երկու և կէս ժամին ՆՈՐԻՆ ՎԵՀԱ-
ՓԱՌՈՒԹԻՒՆԸ *շքախմբի հետ ներկայացաւ* ՆՈՐԻՆ
ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ *Պետերհովի պալա-
տում. ընդունելութիւնը հանդիսաւոր էր։* ԿԱՅՍԵՐ
գերողորմած վերաբերմունքը դէպի ՆՈՐԻՆ ՎԵ-
ՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ *անձը և նորա շքախումբը ընդ
միշտ անջընջելի կմնայ մեր յիշողութեան մէջ։*

Գարեգին Արքեպիսկոպոս.

30 *Մայիսի Պետերբուրգ*